

## ՅԱՌԱՋԱՂԻՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆԸ

Մատաղ սերունդի դաստիարակութեան խնդիրը ամեն տեղ և ամեն ժամանակ քննութեան առարկայ է եղել, որովհետև կեանքը փոփոխուելով, գիտութիւնները հսկայալից քայլերով առաջ գնալով միշտ էլ կարիք է դնւոյնք փոխելու նաեւ դաստիարակութեան ձեւերը՝ ուղիղ և ճիշտ հիմքերի վերայ գնելու այդ կարեւոր գործը. դաստիարակութեան խնդիրը այնպիսի սերտ կապերով է շաղկապուած գիտութեան հետ, որ առանց վերջինից օգուտելու մեռած ու անկենդան կըմնայ դաստիարակութիւնը և կամ կըսլաւորաստէ այնպիսի սերունդ, որն անընդունակ ու անպատասաւ կրկինի ժամանակի հետ ընթանալու և նա կըդառուտարտուի անպայման կորըստեան: Բայց բուական չէ միայն յառաջադիմող գիտութիւններից պաշար վերցնել և նորան միշտ հետեւել, կարեւոր է նաեւ հիմնաւորապէս իմանալ թէ՛ արդեօք ինչպէս պէ՛տք է դաստիարակել ու առաջնորդել մատաղ սերունդը, որ նորա ձեռք բերածը չմնայ մեռած և կամ այնպիսի գաղափարներ չյառաջանէ երիտասարդների մէջ, որոնք խորթ լինին կեանքի համար և կամ որոնց իրականացնելու համար անպատասաւ ու անկարող լինին նոքա: Եթէ երիտասարդները կեանք են դուրս գալիս մեծամտաւոր լի վստփուն զղացմունքներով, գեղեցիկ գաղափարներով ու ձգտումներով, եթէ նոքա սրտով ցանկանում են որ և է կ'ըստով հոտարակական կեանքը ղէպի շուր բարեփոխել, բայց չեն կարողանում իրագործել իրանց այդ փափաղները և փայլիայած իդիալները մնում են լոկ իբրեւ իդիալներ, այդ պիտի վերագրել նոցա ստացած կրթութեան պակասուոր կողմերին և (կամ ուղիղ հասկացած չլինելով կեանքի բուն նպատակը) նոցա թիւր ըմբռնողութեան:

Ասում են, որ մարդու հոտակի մէջ «կեանքի արշալուսից աւելի կարճ ժամանակ չկայ»\*), դա երիտասարդութիւնն է, երբ հոգին լի է լինում գեղեցիկ ձգտումներով դէպի լուսաւորը, դէպի գերազոյնը, դէպի իդիալականը, բայց ցաւալի է նկատել, որ ներկայումս շատ երկրներում և շատ հանգամանքներում երիտասարդական իդիալները չափազանց կարճ են լինում և մեռնում են ժամանակից շատ վաղ, իբրեւ վաղանցուկ գեղեցկութեան մի դէպ: Կարծես այդ գեղեցիկ ձգտումների հետ երիտասարդի կրծքում թաղնուած է մի դաժան

\*) Ловить „Безсильные идеалы“.



միշտ, որը նորան անժամանակ գերեզման է իջեցնում: Գործա լինում են յաճախ ոչ միայն վաղանցուկ, այլ հանդիսանում են մեծամասամբ անսպասելի, ոչ մի հեռք չթողնող այն հասարակութեան վերայ, որոնց մէջ մտադիր է նա իւր իզիլականացրած մտքերը իրագործելու համար: Իւր բազմատեսակ փոթորիկներով շատ անգամ աղկում է երիտասարդական այդ դադափարների վերայ, այլ խօսքով փչում է նոցա և միայն շատ հազուադէպ դէպքում են նոքա կարողանում կեանքի անհուն ծովի մակերևոյթը տարուբերել:

Այդ անմխիթար և չափազանց տարածուած երևոյթի պատճառները մանկավարժների և դաստիարակների համար ներկայանում են իբրև վերին աստիճանի ուշադրաւ մի դործ. դաստիարակները պարտաւոր են պատրաստել մատաղ սերունդից այնպիսի մարդիկ, որոնք ճանաչեն իրանց պարտքը, իրանց անձը նուիրեն նպատակաշարմար ու ստղարեր աշխատանքի, հասարակական կեանքի կատարելագործութեան. չէ որ այդ երիտասարդներից պիտի հանդէս գան խելացի և ուժեղ մաքառողներ ճշմարիտ իդիալների տարածման համար. իսկ դորա փոխարէն երիտասարդութիւնը տալիս է համարեա միշտ անկեղծ, բայց թոյլ, անոյժ երագողներ, որոնք շատ շուտով բաժանւում են երիտասարդական իդիալներից: Դաստիարակները և մանկավարժները պիտի մտածեն թէ ինչո՞ւ երիտասարդութիւնը լինում է ոչ թէ այն, ինչ որ պէտք է լինի, ինչո՞ւ նորա իդիալները չեն իրագործւում կեանքի մէջ գտնէ համեստ չափով: Օգտուելով Լոյիշի մի յօդուածից քաղուածօրէն առաջ կը բերենք Ննայի համալսարանի յայտնի մանկավարժ Բերգեմանի դաստիարակութեան վերաբերեալ մի գրուածքը, ուր նա ցոյց է տալիս մանկավարժութեան և դիտութեան միջի սերտ կապը և այն միջոցները, որոնք կարևոր են երիտասարդների դաստիարակութեան համար:

Աւագ սերունդը քայլ առ քայլ առաջ գնալով կատարում է իւր կեանքի ուղին և տեղի տալիս երիտասարդ սերունդին. մահը և կեանքը այսպիսով ընթանում են ձեռք ձեռքի առած և հասարակութիւնը աստիճանաբար կորցնելով իւր անդամներից ոմանց, դոցա փոխարէն յառաջ է բերում նորերին՝ աւելի թաքմ ուժերով: Կեանքի մշտական վերանորոգութեան այս գործողութիւնը վերաբերում է հասարակութեան ոչ միայն ֆիզիքականին, այլ և նորա հոգեկան կադմակերպութեան: Աւագ սերունդը տալիս է մատաղ սերունդին իւր հողին, իւր գաղափարները, իւր զգացմունքները, իւր հաւատալիքներն ու ձգտումները, գիտութիւնն ու փորձառութիւնը: Հոգեկան կեանքի այդ փոխանցումը մէկ սերունդից միւսին կադմում է այն գործողութեան բովանդակութիւնը, որը մենք կոչում ենք դաստիարակութիւն. հետեապէս և հասարակութեան հոգևոր կեանքի բովան-



դաւկութիւնն և ուղղութիւնը կազմող պայմանները անխուսափելի կերպով պիտի ազդեն և մանկավարժական դադաւարներէ վերայ: Դաստիարակութեան պատմութիւնը պիտի հանդիսանայ միմիայն իբրև ընդհանուր պատմութեան մի հատուածը, իբրև նորա արտացոլումը: Կեանքի մէջ տեղի ունեցող այն բոլոր ալելուծութիւններն ու փոթորիկները, յառաջխաղացութիւնն ու յետադիմութիւնը, որոնք տեղի են ունենում հասարակական դադաւարներէ, մտածմունքներէ, յոյսերի և հաւատալիքների շրջանում, պէտք է անխուսափելի կերպով արտացոլեն և մանկավարժական աշխարհայեցողութեան շրջանում: Կարիք չկայ սորա համար ապացոյցներ որոնել պատմութեան մէջ, քանի որ ներկայ կեանքն առանց այն էլ շատ փաստեր է տալիս դորա համար. «նոքա, որոնք գիտակցական հայեացքով են նայում կեանքի վերայ, այդպիսիների համար կասկած չկայ, որ այժմ մենք ապրում ենք մտաւոր յուզմունքի մի շրջանում, այժմ իրանց համար ճանապարհ են հարթում հասարակական կեանքի մէջ նոր ուղղութիւններ, հարթում են դանդաղ, բայց անընկճելի ուժով: Նախնիքների մեզ թողած—կոտկած հասարակական կեանքի կազմակերպութիւնը մեզ թւում է հին, զառամած, փտած ու անոյժ. մենք որոնում ենք նորը թէ բովանդակութեամբ և թէ ձևով», ասում է Բերգեմանը: Հոգեկան կեանքի այս երևոյթները տարածուած են ամենուրեք թէ տնտեսական և թէ քաղաքական կեանքում, բարոյականութեան և իրաւունքի, գիտութեան և գրականութեան մէջ, ամեն տեղ կռիւ է յառաջանում հնի և նորի մէջ, որը դեռ մօլթ ձևով նշմարւում է հասարակական սկզբունքների մէջ:

Նւ այս բոլորը իւր ազդեցութիւնն է թողնում թէ տնտեսական և թէ գործնական մանկավարժութեան վերայ. այստեղ էլ վիճաբանութեան առարկայ են դառնում մարդկութեան իյրիւնները, հասարակական կեանքի վատ կազմակերպութիւնը, որից յառաջանում են «հիւանդ դարու» դժբախտ ու հիւանդ երեխաներ. այստեղ էլ անխընայ քննադատութեան են ենթարկւում ներկայ մանկավարժութեան կարգ ու կանոնները, ծրագիրները, որոնք արդէն զառամած ու հնացած են, այստեղ էլ որոնում են նոր հաստատութիւններ—մասնաւորապէս նոր դպրոց և նոր ընտանիք, որոնք համապատասխանէին հասարակութեան էական պահանջներին, ուստի և կազմում են նոր մանկավարժական կազմակերպութեան ծրագիրներ: Ահա այսպիսի մանկավարժական ծրագիրներից մէկն էլ կազմել է Բերգեմանը, որը կատարելագործել է մի շարք այլ գրուածքներով. ամենից հետաքրքիրն են դոցանից առաջին երկու մասերը, որոնք նուիրուած են ա) դաստիարակութեան խնդրին և բ) դաստիարակութեան միջոցներին:



## 1. Դաստիարակութեան խնդիրը.

«Ինչպէս գործողեալ», ասում է յայտնի մանկավարժ Բայնը, «նախ քան զօրտաժիններն առաջ մղելն որոշում է իւր նպատակը և ամեն կողմից պարզում նորան, այնպէս էլ մանկավարժը պէտք է նախ և առաջ որոշէ թէ ինչպէս և ո՞ր կողմ պիտի առաջնորդէ իւր սանիկին: Ով կոչուած է դաստիարակելու, նա ամենից առաջ պիտի իմանայ թէ ինչ բանի է ձգտում. հէնց այս հարցիցն էլ ծագում են և միւսները. եթէ նա որոշ նպատակ ի նկատի չունի, այն ժամանակ ամեն բան մնում է քիչ ու շատ մթութեան մէջ և պատահականութեան ենթակայ: Բայց բանական մարդը չի կարող այդպիսի մի լուրջ խնդիր պատահականութեան կամքին թողնել: Չմտածել որ և է նպատակի մասին, չորոշել իւր համար մի կանոնաւոր ուղի՝ ճիշտ և անշեղ ընթացաւոր համար, դա մարդկային ծուլութեան յատկանիշն է, կարծես թէ նպատակն ինքն իրան կորուստի դաստիարակութեան ընթացքում... Բայց մի կրցանկանայ հետեւել մի այնպիսի առաջնորդի, որն ի նրկատի չունենալով որ և է մի գիտակցական նպատակ, այստեղ կամ այնտեղ զանազան ռազմական փորձեր է կատարում: Սե միթէ կարելի է որ և է խելացի գործ սպասել այնպիսի քանդակագործից, որը մօտենում է մարմարեայ մի փերթի զանազան կողմից և սկսում է իւր գործիքներով փորագրել նորա վերայ, ինքն էլ չիմանալով թէ ինչ է իւր ցանկացածը, այլ յոյս ունենալով թէ գործի ընթացքում զաղափարը ինքն իւրան կը յայտնուի: Այսպիսի աննպատակ գործի ժամանակ փերթի շատ մասերը հաւանականաբար կը հարթուին, իսկ միւս մասերը այնքան կիղծուին, որ երբ վերջապէս առաջնորդող գաղափարը կը յայտնուի, այն ժամանակ այլ ևս չառ ուշ կը լինի նոյն փերթի վերայ զաղափարած միտքը իրագործել» \*):

Այսպիսով դաստիարակը ամենից առաջ պիտի որոշէ իւր նպատակը, այսինքն պարզէ իրան այն իդիալական մարդկային կերպարանքի հիմնական գծերը, որոնց մանկավարժը կը կամենար մարմնացնել իւր սանիկի մէջ, որքան այդ կարելի կը լինի:

Բայց մեր պէտք է որոնել իդիալական մարդու կերպարանք. ի հարկէ, ամենից առաջ բարոյական փիլիսոփայութեան մէջ, որովհետեւ նա յատկապէս խօսում է մարդկային կեանքի իդիալների մասին: Ի՞նչ է արդեօք սովորեցնում այդ բարոյական փիլիսոփայութիւնը:

Կար ժամանակ, երբ մարդ գոռոզութեամբ էր վերաբերում դէպի բնութիւնը, իրան կախաւ համարում էր ամբողջ տիեզերքի կենդանի և նորա միակ տէրն ու իշխողը, ոչ մի պարտաւորեցուցիչ

\*) Rein „Erziehungsziel“.



օրէնքի չէր ենթարկուում նա. մարդը հստատանում էր իւր անձնական քմահաճոյքի ազատութեամբ և դա համարում էր իւր համար իրրև մի անձնման թագաւորական ապարօշ, Բայց ուրքան դրական գիտութիւնները զարգացան, այնքան աւելի թանգազին ակեր թափուեցան այդ փառահեղ թագից, որով զարգարում էր իրան մարդը. «Նւ մարդը ինքը վարձաւ այնուհետեւ իրրև մի հասարակ օղակ կեանքի գոյութեան ընդհանուր մեծ շղթայի, մի օղակ, որը թէև կապուում միացնում է այդ շղթան, բայց և այնպէս ինքն էլ սերտ և անանջատ կապուած է մնում նախընթաց օղակների հետ և հետևապէս ենթարկուում է նոյն օրէնքներին»\*)։ Նւ մարդ յիրաւի ենթարկուում է հանուր մարդկութեան օրէնքներին, ենթարկուում է այն չափով, որչափով համանման են նորա թէ ներքին հոգեկան աշխարհի և թէ արտաքին ֆիզիքական աշխարհի երևոյթները։ «Մարդու կեանքն է ընդհանուր մարդկութեան կեանքի մի մասնաւոր երևոյթը, իսկ ամբողջ մարդկութեան կեանքն է համաշխարհային կեանքի մի բնկորը», ասում է Սպենսեր։ Բայց բեկորը հասկանալու համար պիտի դադարաւոր ունենանք ամբողջի մասին։ Ի՞նչ է ներկայացնում արդեօք համաշխարհային կեանքը. «Ամբողջ տիեզերքի մէջ, ասում է Բերդեմանը Հիգելի խօսքերով, կատարւում է մեծ, միատեսակ և անզուսպ յառաջադիմող բարեշրջումն, որին ենթարկւում է ամբողջ գոյացութիւնը։ Նւ դա կատարւում է ոչ միայն արտաքին աշխարհում, այլ նա ընդգրկում է և հոգեւոր երևոյթների աշխարհը»։

Այսպիսով համաշխարհային կեանքը ներկայանում է անվերջ և ամեն ինչ ներկաւոր յառաջադիմութեան մի գործողութիւն. ամբողջ տիեզերքի մէջ տեղի է ունենում անհանգիստ մի աշխատանք ստեղծելու կեանքի նորանոր և աւելի կատարեալ ձևեր։ Իսկ եթէ համաշխարհային կեանքի էութիւնը կազմում է գոյութեան աւելի կատարեալ ձևերի ստեղծագործութեան մէջ, այն ժամանակ և այդ գործողութիւնը, ասում է Բերդեմանը, պէտք է և կազմէ մարդկային կեանքի բուն նպատակը. նա պէտք է աշխատէ ուսումնասիրելու համամարդկային գոյութեան աւելի բարձր տիպեր, ուրիշ խօսքով մարդկութիւնը պէտք է առաջ ընթանայ կուրսուրտական յառաջադիմութեամբ և ապրէ նորա համար։ Մարդկութեան պատմութեան մէջ այդ յառաջադիմութիւնը կատարուել է, կատարւում է և պիտի կատարուի, որովհետեւ այդ պատմութիւնը ներկայանում է իրրև մի հատուած համաշխարհային կեանքի և ենթարկւում է բարեշրջման նոյն օրէնքին, որը տիրապետում է ամբողջ տիեզերքում։

Բայց տարբերութիւնը նորանում է թէ ինչպէս մարդկութիւնը

\*) Ad. Wagner,



ի կատար կածէ այդ օրէնքը, արդեօք նա իւր բարոյական պարտքը կը համարէ համամարդկային գոյութեան կատարելագործութեան, կուլտուրայի յառաջադիմութեան գործը, թէ՛ նա կը խորխալիէ մը թութեան մէջ, չհասկանալով իւր կոչումը և կամ թէ չի ցանկանալ նորան ի կատար ածել. վերջին դէպքում անխուսափելի են անթիւ վշտերը, տանջանքները, անմխտ թափառիլը մի տեղից միւսը, բախախ կամքին ենթարկուիլը, որոնք ծագում են այնպիսի ազդերի և հասարակութեան մէջ, որոնք չեն կարողացել համակերպուել համամարդկային գոյութեան պայմաններին: Բայց չի լինիլ այդ վիշտն ու տանջանքը, եթէ մարդիկ հասկանան թէ մարդկութեան յառաջադիմութիւնը, նորա կուլտուրայի զարգացումը կազմում է մարդկային կեանքի բարձրագոյն իմաստը, բարձրագոյն բարոյական բարիքը: Այն ժամանակ մարդիկ կը ձգտեն աւելի ուղիղ ճանապարհով իրականացնելու այն բարոյական իդիալը, որը և պէտք է ուղեցոյց աստղ լինի մարդկութեան համար. և այս իւրաքանչիւր անհատի համար իբրեւ մի ներքին, բարոյական պարտք պէտք է լինի. անհատը, ընդհանուր օրդանիդմի այդ փոքրիկ ատոմը, պէտք է իւր լուծման ձգէ ընդհանուր աշխատանքի մէջ. կռուէ մարդկութեան կուլտուրական բարեփոխման համար և ապրէ նորա համար Բայց առանձին անհատը չի կարող կռուել անմիջապէս ամբողջ մարդկութեան յառաջադիմութեան համար, կամ մասնակցել համամարդկային կուլտուրական աշխատանքին. անհատը իւր բարոյական պարտականութիւնը կարող է կատարել մարդկութեան առաջ աշխատելով իւր հայրենիքի յառաջադիմութեան գործի համար, հայրենի ժողովրդի և ազգային քաղաքակրթական կեանքի կուլտուրական զարգացման համար, և սա պէտք է լինի այն բարոյական ուխտը, որը կատարելու համար պիտի ապրէ և մարդը. նա պէտք է լինի ինքնագոհ, ուժեղ և ազնիւ մաքառող ընդհանուր կուլտուրական զարգացողութեան համար. այսպէս է այն իդիալական մարդու պատկերը, որին իւր անձի մէջ տեղաւորելու համար պէտք է ձգտէ հասարակութեան ամեն մի անդամը: Ահա այսպիսի անհատներն զատտիարակելն է մանկավարժի ամենագլխաւոր գործը:

Պատմական զանազան շրջաններում այդ ինքնագոհ մաքառողներն տիպերը չպիտի նոյնը մնան իրանց բոլոր մասերով, որովհետեւ մարդկային յառաջադիմութիւնը—դա յաւիտեանական հոսող մի գետ է, կեանքը միշտ փոփոխւում է, ուստի առաջ են դալիս նորոնոր խնդիրներ, իսկ հասարակական կեանքի փոփոխմամբ փոխւում է և մանկավարժի գործը. նա պիտի դաստիարակէ, պատրաստէ ոչ թէ սու հասարակ կուլտուրական գործիչ, այլ մարդու, որը մի որոշ հասարակութեան կուլտուրական կատարելագործութեան համար



պէտք է աշխատէ պատմական մի որոշ շրջանում: Բայց դաստիարակչական խնդիրների մէջ իւրաքանչիւր պատմական շրջանի տարրեր խնդիրների հետ ի միասին կայ նաև հիմնական նմանութիւն. «Պետի ամբիւն կանգնած մարդը, ասում է Հնդկական մի փոխտփայ, տեսնում է միայն ալիքները, որոնք յաջորդաբար անցնում են իւր մօտով, իսկ ու կանգնում է հեռու բարձրութեան վերայ, նորա հայեացքը կլանում է ամբողջ գետի ընթացքը, որը երևում է նորան իրրև մի անշարժ արծաթէ թել ձգուած դաշտերի միջով»: Նոյնը կարելի է ասել և դաստիարակչական խնդիրների մասին, իւրաքանչիւր պատմական շրջան պէտք է ունենայ իւր խնդիրը, իսկ եթէ մենք փորձենք մտաւոր հայեացքով ըմբռնել գալոց դարերի սահող հեռաւորութիւնը, այն ժամանակ կը տեսնենք մի ընդհանուր ուղղութիւն, մանկավարժական խնդիրների մի ընդհանուր նպատակ՝ այսինքն յառաջադիմութեան գործիչների դաստիարակութիւն:

Բերգեմանը համոզուած է, որ դաստիարակութեան խնդրի այսպիսի որոշումը շատ մանկավարժների սրտովը չի լինիլ. չէ՞ որ տիրապետող մանկավարժական տեսութիւնները հաստատում են, թէ մանկան պէտք է դաստիարակել ոչ թէ մարդկութեան կամ հասարակութեան համար, այլ միայն իւր համար. թող մանկավարժը ճանաչէ միայն իւր սանիկի անձնաւորութիւնը և առաջնորդուի նորա զարգացման խնդրով և ոչ թէ համամարդկային խնդիրներով: Այսպէս են ասում մանկավարժներից շատերը: Այստեղ արդէն հեղինակի աշխարհայեացքը կատարելապէս հակառակ է ընթանում տիրապետող մանկավարժական տեսութիւններին. նա յոյս ունի, որ իւր փայփայած թանգագին սկզբունքները կը յաղթանակեն. նա հաւատում է, որ անհատականութեան սկզբունքի մահուան ժամը արդէն մօտ է, նա իւր դարը անց է կացրել և այժմ պէտք է հասարակութեան շահերը աւելի բարձր դասել, քան զատ զատ տնտեսների շահերը: Յետոյ կը գայ այն պատմական շրջանը, երբ աւելի բարձր կը դասուեն ամբողջ մարդկութեան շահերը: Այսպիսով սլատմութեան, այսինքն հասարակական-պատմական զարգացման անդառնալի ընթացքը պոկում է անհատականութեան կենսական արմատները և մաքրում է ճանապարհը նոր հասարակական աշխարհայեցողութեան համար: Եւ այդ աշխարհայեցողութիւնն արդէն ոյժ է ձեռք բերում, նա ամրանում է այժմ աւելի և աւելի ուժեղ, տիրապետելով բոլորի մաքերը, առանց բացառութեան. շատերն աշխատում են իրրև թէ հակառակուել և հնի մէջ են պաշտպանութիւն որոնում, բայց բոլորն ի դուր ջանք է: Թող մանկավարժներն իրանք էլ հեռանան այդպիսի դուր ջանքից, հին, անհատականութեան տեսութիւնները նոքա չեն կարող պահպանել. բաւական խարխուլ են



դոցա հիմքերը: Մանկավարժները մատնանիչ են անում այն, որ դատարարակութեան առարկայ հանդիսանում է անհատը. այո՛, պատասխանում է Բերդեմանը, բայց իրական անհատը և ոչ թէ երևակայականը. իսկ այդ իրական անհատը ապրում է հասարակութեան մէջ, նորանից դուրս չի կարող ապրել, բացի դորանից ամեն կողմից էլ թէ խելքի, թէ կամքի և թէ զգացողութեան կողմից մարդը հանդիսանում է չրջապատող հասարակութեան թէ մարմնից և թէ ոսկրից. անհատը անբաժան մասն է հասարակութեան օրգանիզմի, որը իւր գոյութեամբ կարող է միայն ապրել այդ օրգանիզմի գրգռւած, նորա համար և նորա կեանքով: Մի՞թէ մանկավարժները պիտի հերքեն այս փաստը. և որովհետեւ սա անհերքելի է, ուստի պէտք է դատարարակել անհատին համախմբեալ ամբողջութեան համար — հասարակութեան և մարդկութեան համար և ոչ թէ իւր անձի համար: Մանկավարժները խօսում են անհատի բարոյական արժանիքի մասին, բայց չէ՞ որ այդ արժանաւորութիւնը չափւում է ոչ թէ նորանով, թէ ինչ է արել մարդը իւր անձնական բարիքի համար, այլ նորանով թէ ինչ է կատարել նա հայրենիքի և մարդկութեան համար:

Ա. Շահ.

(Կը շարունակուի).

## ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

### ԿՐՕՆՆԵՐԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

#### I

Ճապոնացիներն իրենց ծագումն առնում են մոնղոլական ցեղերից, որոնք Աորէայից Ճապոնիա խուժեցին. նրանցից մէկը բնակութիւն հաստատեց Աիուշու կղզու վրայ՝ մօտաւորապէս Ա-րդ դարում Ք. ա. իսկ միւսն արդէն մի քանի դար նրանից առաջ հաստատուել էր Իդու-մոյում: Առաջին ցեղն ընկձեց Երկրորդին ձուլեց, նրան և